«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն  Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն  Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

*Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը առարկայի ուսուցման գործընթացում*

*Առարկան՝ Գրականություն*

*Հետազոտող ուսուցիչ՝ Թ. Բաբայան*

*Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Արաքսավանի միջնակարգ դպրոց*

Երևան 2022

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայմանն է: Սա մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հայացքներն ու համոզմունքները: Կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները հետևյալն են.

1.Ինչպես զարգացնել արժեհամակարգի վրա հիմնված քննադատական մտածողություն սովորողի մոտ գրական ստեղծագործությունների միջոցով:

2. Պարզել, թե արդյո՞ք դասավարդման մեթոդը ազդում է քննադատական մտածողության ձևավորման վրա և գտնել առավել արդյունավետ եղանակներն ու մեթոդներ:

3. Պարզել, թե արդյո՞ք քննադատական մտածողություն ունեցող սովորողները առավել հակված են հակասությունների կարգավորմանը:

## Պատմություն

Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի՝ նախքան վերջնական եզրահանգումները:

Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը:

Նեղ իմաստով քննադատական մտածողություն նշանակում է պնդումների մտածված գնահատում:

Ամենատարածված մեկնաբանություններից մեկն է՝ խելամիտ անդրադարձ (ռեֆլեքսիվ) մտածողություն, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել :

Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ ու հմտություններ, դիտողականություն: Այն կիրառում է տրամաբանությունը, ինչպես նաև հենվում է այնպիսի խորը ինտելեկտուալ ունակությունների վրա, ինչպիսիք են հստակությունը, ճշմարտացիությունը, արդարությունը, բովանդակությունը, լայն մտահորիզոնը:

## Քննադատական մտածողության զարգացման գործընթացը

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է բարձրագույն կրթության գլխավոր նպատակներից մեկը: Յուրաքանչյուր պետության համար կրթության բնագավառը հանդիսանում է պետության զարգացման գործում ռազմավարական նշանակություն և կարևորություն ունեցող ոլորտ, ուստի հաճախ պետության զարգացման հեռանկարները հասկանալու համար ուսումնասիրվում է տվյալ երկրի կրթական համակարգի ռազմավարությունը:

Կրթության որակի ապահովումը, հենասյունային դեր իրականացնելով կրթության զարգացման գործում, շեշտադրում է այն կրիտիկական կետերը, որոնցից բխելու է, թե ինչպիսի հասարակություն է ձևավորվելու գոյություն ունեցող կրթական համակարգի պայմաններում:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով դեռևս զարգացող ժողովրդավարություն, այսօր ունի ժողովրդավարական արժեքներին դավանող հասարակություն կերտելու հրամայական: Այս նպատակի իրականացման ճանապարհներից մեկը անցնում է ուսումնական հաստատությունով:

Հետևաբար ՀՀ ուսումնական հաստատությունների առջև դրված է սովորողներին այնպիսի կրթություն տալու խնդիր, որի արդյունքում կձևավորվեն անհատներ՝ ապրելու ժողովրդավար երկրում:

Անհատի իմացական ընկալումը վերափոխելու ամենաարդյունավետ մեթոդներից մեկը ինքնուրույն, քննադատական մտածողության զարգացումն է: Կարելի է ասել, որ քննադատական մտածողությունն ունի երկու բաղկացուցիչ մաս.

բաղկացուցիչներից մեկը ենթադրում է ինֆորմացիան և համոզմունքները գեներացնելու և վերամշակելու հմտությունների ամբողջություն, իսկ երկրորդը՝այդ հմտություններն օգտագործելու սովորույթն է,որի արդյունքում ձևավորվում է սեփական վարքագիծն ուղղորդելու հիմքը:



Քննադատական մտածողության զարգացման արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է խելամիտ անդրադարձ -մտածողություն, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել :

Ուսումնասիրելով այս թեմայով գրված աշխատությունները՝ կարելի է ասել, որ գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձևավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ սովորողնակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր համադասարանցիների կարծիքը և տալիս է իրապատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ, ինչպես նաև կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ, որը նույնպես պետք է պատճառաբանված լինի, քանզի դասարանն ընդհանրապես ճնշում է գործադրում անհիմն կարծիքների վրա: Կարևոր է նշել նաև,որ այս սափսի մտածողության համար անհրաժեշտ է խոր գիտելիք քննարկվող առանկայի վերաբերյալ, ուստի մի շարք վերլուծաբաններ պնդում են, որ անհատի մոտ քննադատական մտածողության դրսևորումը մեծապես կախված է քննարկվող խնդրի բովանդակությունից. Եթե անհատը ծանոթ չէ թեմային, ապսիփ կլինի ակնկալել նրանից նման մտածողության դրսևորում: Խիստ կարևոր է ուսուցչի դերը քննադատական մտածողության զարգացման գործում: Ուսուցիչը պարտավոր է սովորողին քննարկումների միջոցով դրդել վիճարկելու տարբեր գաղափարներ, ենթադրություններ, տեսություններ, նորմեր և կանոններ, քանի որ քննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստանձնել գաղափարներ ու խնդիրներ քննելու և հետևություններ անելու պատասխանատվություն (Garrison, 1991): Ուստի պատահական չէ, որ շատ գիտնականներ պնդում են, որ ուսուցչի և սովորողի միջև երկխոսության և քննարկման ծավալումը քննադատական մտածողության ձևավորման և զարգացման թիվ մեկ գրավականն է: Դասավանդողի հիմնական դերը կայանում է քննադատաբար մտածողի օրինակ ծառայելու մեջ: Այսինքն դասավանդողն առաջինը ինքը պետք է պատրաստ լինի վիճարկելու սեփական արժեքներն ու գաղափարները և դրանով իսկ օրինակ ծառայի իր ուսանողների առջև:

Յաջորդ այս մասը դասավանդվող առարկան է: Քանի որ քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունները հնարավոր չէ կիրառել առանց խնդրո առարկայի վերաբերյալ նախնական գիտելիքի: Ուստի քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է լինի և՛ առարկայական ծրագրի, և՛ ուսումնական պլանի զարգացման հիմքում:

Վերադառնալով դասավանդման մեթոդիկային՝ Անուրադհա Գոքհեյլը ուսումնասիրել է, թե արդյոք քննադատական մտածողության հմտությունների ձեռքբերումը կախված է դասավանդման և սովորելու մեթոդից: Նա առանձնացրել է սովորելու երկու՝ անհատական և համագործակցային մեթոդ (individule and collaborative methods):



Յետազոտության արդյունքում Գոքհեյլը պարզել է, որ այն սովորողները, ովքեր մասնակցել են լսարանային քննարկումներին, խմբային աշխատանքներին, այսինքն նյութի համատեղ յուրացման գործողություններին, ի տարբերություն մյուսների, զգալիորեն լավ ցուցանիշ են դրսևորել քննադատական մտածողությունը չափող թեստերը լրացնելիս (Gokhale, 1995): Փաստորեն հետազոտությունը ցույց տվեց, որ սովորելու համագործակցային մեթոդը սվորողներին առավել լայն հնարավորություն է տալիս ուսանողներին գաղափարները վերլուծելու, սինթեզելու և գնահատելու:

Երբ ուսումնասիրում ենք քննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գրականությունմ գոյություն ունեցող մոդելները, ակնհայտ է դառնում, որ բոլոր այդ մոդելները շատ կամ քիչ չափով հիմնվում են դեռևս 1956թ. ականավոր գիտնական Բենջամին Բլումի կողմից մշակված տաքսոնոմիայի վրա: Բլումի տաքսոնոմիայի ճանաչողական կամ, այսպես կոչված, իմացական խումբը բաղկացած է վեց մակարդակներից – գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, սինթեզ, և գնահատում: Գիտելիքի ձեռքբերման մակարդակում սովորողը կարող է հիշել, տարբերակել, մտաբերել կամ գտնել ուսուցման ընթացքում ներկայացված յուրահատուկ տեղեկատվությունը: Այն կարող է դրսևորվել փաստերի, կանոնների, դիագրամների, ձայնի և այլնի միջոցով:

Ընկալման մակարդակում սովորողը կարող է ցույց տալ, որ հասկացել է տեղեկությունը՝ վերափոխելով այն տարբեր ձևերի կամ ճանաչել դրա վերափոխված տարբերակը:Այն կարող է իրականացվել սովորողի կողմից բառերով բացատրության, ամփոփման, օրինակ բերելու և այլ ձևերով:

Տաքսոնոմիայի կրրառման մակարդակում սովորողը կարող տեղեկատվությունը կիրառել՝ այն օգտագործելով կոնկրետ գործողության մեջ: Այդ

գործողությունները կարող են լինել հաշվելը, գրելը, կարդալը, սարքավորումներ օգտագործելը և այլն:

Չորրորդ մակարդակում, որը ենթադրում է վերլուծություն, սովորողը կարող ճանաչել տեղեկատվության հիմնական կազմվածքն ու կառուցվածքը, տրոհել բաղկացուցիչ մասերի և որոշել դրանց միջև առկա կապերը: Սովորողը կարող տարբերել փաստերը ենթադրություններից:

Բլումի տաքսոնոմիայի հինգերորդ մակարդակը վերաբերում է սինթեզին: Այս մակարդակում սովորողը կարող տեղեկատվություն ստանալ տարբեր աղբյուրներից՝ իր անհատական նյութը, տեսակետը, դիրքորոշումը ձևավորել ու նպատակով:

ԵՎ վերջապես վերջին՝ գնահատման մակարդակում սովորողը կարող որոշակի չափորոշիչներ կիրառել ՝օբյեկտի վերաբերյալ եզրահանգումներ անել ու համար:



Վերոնշյալ բոլոր վեց մակարդակներում էլ սովորողներին անհրաժեշտ են համապատասխան հմտություններ, սակայն քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավել ապես շեշտել վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակները: Բլումի տաքսոնոմիայի մակարդակները դասավորված են աճման կարգով, այսինքն նախորդ մակարդակը հաջորդի հիմքն է, սակայն քննադատական մտածողության համար անհրաժեշտ են այն հմտությունները, որոնք ձևավորվում են վերջին երեք մակարդակներում:

## Քննադատական մտածողության զարգացումը գրականության դասընթացին

Դեռևս տարրական դպրոցում անհրաժեշտություն է դառնում կարևորել սովորողի կարծիքը՝ հիմք ստեղծել ով հետագա ինքնուրույն վերլուծական մտածողության ձևավորման և զարգացման համար: Հենց այդպիսի մտածողությունն էլ իր հերթին դառնում է քննադատական մտածողության հիմքը: Ցածր դասարաններում ուսումնասիրված գրական ստեղծագործության վերլուծությունը սովորողին հնարավորություն է տալ իս համադրել ,համեմատել նաև սեփական եզրահանգումներ անել : Շատ կարևոր է, որպեսզի այդ եզրահանգումները քննարկվեն հասակակիցների հետ, հետո նաև ուսուցչի:

Այս պարագայում էական նշանակություն ունեն դասավանդման ինտերակտիվ մեթոդները, դասերի համագործակցային ձևերն ու եղանակները: Հասարակական

կյանքի տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում դպրոցը նույնպես որոշակի փոփոխությունների է ենթարկվում: Աշակերտը գիտելիքներ մտապահողից ու վերարտադրողից, այսինքն՝ ուսուցման օբյեկտից, վերածվում է ուսուցման գործընթացի գործուն մասնակցի՝ ուսուցման սուբյեկտի, ինքնուրույն որոշումներ կայացնողի: Իսկ դա էլ կյանքի հրամայական պահանջն է: Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը պահանջներ է ներկայացնում ուսուցչին: Նա պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ լինի ուղղորդողի, օգնականի, խթանողի, մասնակցի դերում և հնարավորություն ընձեռի աշակերտներին՝ խորհելու և անկաշկանդ ինքնարտահայտվելու: Դպրոց մուտք գործող նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադատական մտածողության զարգացման տեսությունը:

«Քննադատական մտածողություն» եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է «քննադատել» բառին: Սակայն այս բառը ներառում է «քննել» և «դատել» բառհասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել:



Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր դասին ունենա իր՝ թեկուզ փոքրիկ ներդրումը: Քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ աշակերտներն ընդգրկվում են դասապրոցեսի մեջ՝ մինչև նոր նյութի հաղորդումը (խթանում), նյութի մատուցման ընթացքում (իմաստի ընկալում) և նյութը յուրացնելուց հետո (կշռադատում): Այս համակարգը հայտնի է որպես ԽԻԿ /հապավումով/ համակարգ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլ և յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սովորողների ստեղծագործական մտածողությունը:

Միջին դպրոցում ուսումնասիրվող գրականության դասընթացը մեծ հնարավորություններ է ստեղծում և ուսուցչի և սովորողների համար նյութի հանգամանալից վերլուծություններ կատարել, արդիականացնել իրավիճակները ,

ստեղծագործության գաղափարի շուրջ կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, կարծիքների փոխանակումներ: Արտադասարանական ընթերցանության համար նախատեսված նյութը ևս հիանալի „պատճառ-պատրվակ„ է նմանատիպ դաս-քննարկումներ կազմակերպելու համար : Բայց եթե ծրագրով նախատեսված գրականությունը պարտադիր ուսումնասիրության նյութն է, ապա արտադասարանական ընթերցանության ժամերին ուսուցիչը առավել ազատ է ընտրելու, հանձնարարելու գրականություն, որի նյութը միջին դպրոցի սովորողի տարիքային առանձնահատկություններին համապատասխան լինելով հանդերձ կհետաքրքրի նրան, վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու, դասընկերների և ուսուցչի հետ իրեն հուզող հարցերը քննարկելու հնարավորություն կտա: Այս առումով պետք է որպես առավելություն դիտարկել նաև այն փաստը, որ սովորողը ինքը ևս ազատ է իր հետաքրքրություններին համապատասխան գրականություն ընտրելու: Սակայն այստեղ նույնպես կարևոր է ուսուցչի դերը՝ որպես ուղղորդող և խորհրդատու: Հենց վերջինս պետք է ձևավորի համապատասխան արժեհամակարգ սովորողների մոտ քննադատական մտածողության միջոցով:

## Քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ և դասերի տեսակներ



Մեթոդը բառացի նշանակում է որևէ բանի հասցնող ուղի, նպատակին հասնելու եղանակ, որոշակի ձևով կարգավորված գործունեություն: Մեթոդը իրականության ճանաչման անհրաժեշտ միջոց է և գործիք: Այն որոշակի սկզբունքներով , կանոններով և հնարներով իրականացվող գործունեություն է, որ կոչված է ապահովելու տրված նպատակը տանող կարճագույն ուղի:

Մեթոդները ստեղծվում են այս կամ այն տեսության շրջանակներում և կոչված են ծառայելու վերջինիս: Յուրաքանչյուր տեսություն ստեղծում է իր մեթոդները և նրանց օգնությամբ լուծում տարբեր խնդիրներ:

Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթական կրթության բովանդակության յուրացմանը, այսինքն ուսուցման նպատակների իրականացմանը:

Քննադատական մտածողությունը զարգացնող մեթոդներից են՝

- Հարց ու պատասխանի մեթոդը
- Իմանալ-ունենալ, իմանալ-սովորել մեթոդը
- Դեդեկտիվ մեթոդը
- Բանավեճի մեթոդը

Քննադատաբար մտածել սովորեցնելը բարդ և համակցված քայլերի հաջորդականություն է: Դեպի քննադատական մտածողություն տանող ճանապարհը բավականին երկար է: Գոյություն ունեն որոշակի պայմաններ, որոնք կարող են նպաստել քննադատական մտածողության զարգացմանը: Այն խթանելու համար հարկավոր է

- Սովորողին ժամանակ ու հնարավորություն տալ
- Թույլ տալ սովորողին խորհել համապատասխան հարցի շուրջ
- Հնարավորություն տալ սովորողին արտահայտել իր կարծիքը մինչև վերջ
- Նպաստել ուսումնական գործընթացում սովորողի ակտիվ ներգրավմանը
- Խրախուսել սովորողին

Աշակերտները միշտ չէ, որ խորհում են ազատ: Հիմնականում սովորողը սպասում է ուսուցչի կարծիքին կամ գնահատականին: Սակայն մյուս կողմից ուսուցիչը զարգացնելով աշակերտի քննադատական մտածողությունը պետք է ուղորդողի դերում լինի:

Քննադատական մտածողությունը հմտություն է, որը կարող է օգտագործվել շատ իրավիճակներում՝ իր բազմակողմանիության պատճառով. բայց հենց իրավիճակների և համատեքստերի լայնության պատճառով, որոնցում դա օգտակար է, գոյություն չունի այդ տերմինի համընդհանուր սահմանում:



Հետևաբար, քննադատական մտածողության շատ սովորողներ կենտրոնանում են դրա բնութագրերը նկարագրելու վրա, այլ ոչ թե հստակ սահմանելով, թե դա ինչ է: Այն մարդը, ով օգտագործում է քննադատական մտածողություն, որոշում չի կայացնում և չի հենվում իր հույզերի վրա:

Ընդհակառակը, այն ի վիճակի է հավաքել տվյալներ, որոնք անհրաժեշտ են իրավիճակն ամբողջությամբ հասկանալու համար, այնուհետև վերլուծել դրանք՝ առավել տրամաբանական եզրակացություն անելու համար:

Հետևաբար, ցանկացած պատճառաբանություն, որը հիմնված է ոչ թե փաստերի, այլ զգացմունքների կամ կարծիքների վրա, չի կարող համարվել քննադատական մտածողություն:

Քննադատական մտածողության ակտ իրականացնելու համար բավական չէ, որ կարողանանք ռացիոնալ տվյալներ հավաքել և անտեսել հույզերը: Սրան գումարած՝ քննադատական դատողություն ձևակերպել ցանկացող անձը պետք է կարողանա անդրադառնալ թեմային, այնպես, որ ապահովի, որ ունկնդրողը լիովին հասկանա, թե ինչ է կատարվում:

## Եզրակացություն

Ուսումնասիրելով քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման գործընթացը գրականության դասաժամերին, կիրառվող մեթոդները, դասերի տեսակները ինչպես նաև համադրելով և համեմատելով նման դասերի վերջնարդյունքները կարելի է հանգել մի շարք եզրակացությունների:

- Գրականության դասերը լայն հնարավորություններ են ստեղծում քննադատական մտածողության զարգացման համար, եթե ճիշտ են ընտրված մեթոդները, եթե ուսուցիչը հանգամանալից նախապատրաստել է այն ուղին, որով սովորողի մտածողությունը փուփ տանի դեպի ճիշտ քննադատություն՝ չբացառելով սովորողի անձնական ձևավորված կարծիքը, որը, սակայն, չպետք է հակասի, կամ խիստ հակասի ընդունված արժեհամակարգին:
- Հետազոտության արդյունքում / սեփական դասեր, ինչպես նաև մի քանի դասալսումներ/ պարզվեց, որ դասավանդման մեթոդներից է մեծապես կախված քննադատական մտածողության զարգացումը միջին և ավագ դպրոցներում: Եթե քննադատական մտածողության զարգացման համար տարրական դպրոցում ձևավորվել է համապատասխան հիմք, այսինքն սովորողը կարողանում է ուսուցչի իրեն առաջադրված հարցերի, առաջադրանքների միջոցով սեփական վերլուծություններ կատարել, կարճ եզրահանգումներ անել, ապա միջին և ավագ դպրոցում հիմնականում արդյունք են ապահովում դաս-բանավեճերը, դաս-դատավարությունները, որոնց



ժամանակ սովորողները հնարավորություն ունեն ոչ միայն սեփական վերլուծություններն ու եզրահանգումները կատարել այլ նաև հենց իրենք են հարցեր առաջադրում, կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծում կամ լուսաբանում հարցեր: Այս ամենը կատարվում է ուսուցչի անմիջական հսկողությամբ, ուղղորդմամբ:

- Հետազոտության ընթացքում տարբեր դասարաններից ընտրված մի քանի աշակերտների առաջադրվեցին 3 կոնֆլիկտային իրավիճակներ, որտեղ նրանք պետք է հանդես գային որպես հակասություններ կարգավորող: Պարզվեց, որ սովորողները կաշկանդվում են գրական ստեղծագործությունից դուրս

եզրահանգումներ անել, վախենում են սխալ հասկացված լինելուց, ակնկալում են ինչ-որ ուղղորդող միտք կամ կարծիք ուսուցչի կողմից: Այստեղից հարկավոր է լուրջ հետևություն անել, որ սովորողների մոտ ձևավորված և նույնիսկ զարգացած քննադատական մտածողությունը դեռևս կարողունակություն չէ: Համապատասխան իրավիճակներում հայտնվելիս քննադատական զարգացած մտածողություն ունեցող սովորողները կկարողանան հակասություններ կարգավորել առավել ինքնավստահ լինելու դեպքում:

Հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների վերանայում, մանկավարժական նոր մեթոդների և ձևերի, նոր տեխնոլոգիաների որոնում և կիրառում: Քննադատական մտածողության զարգացումը դարի հրամայականն է զարգացած հասարակություն ունենալու ճանապարհին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- Ներածություն_________________________________________________ ___ _1
- Պատմություն ___________________________________________ ____________ _1

- Քննադատական մտածողության զարգացման գործընթացը _ ______________ ___ 2
- Քննադատական մտածողության զարգացումը գրականության դասընթացին ____ __ 5
- Քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ և դասերի մտ_ սակներ________________________________________________________6
- Եզրակացություն______________________________________________ _8
- Բովանդակություն____________________________________________ _ 11
- Գրականության ցանկ___________________________________________ _12

# Գրականության ցանկ

1. Գ. Հարությունյան „Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում„ / Երևան 2014/

2. Ա. Անափիոսյան „Քննադատական մտածողություն ձևավորող կրթությունը որպես կանխակալ մտածողության արդյունքում ծագած հակասություններիկարգավորման գրավական„ / 2012/

3. Կառավարություն, Հ. (2011, Հունիս). Հայաստանի Հանրապետության Գիտության Ոլորտի Զարգացման 2011-2015թթ. ռազմավարական ծրագիր. Retrieved November 2011, from Գիտության պետական կոմիտե:

4. Alfaro-LeFevre, R. (2009-2010). Promoting Critical Thinking in Frontline Nurses. Retrieved August 16, 2011, from Teaching Smart/ Lerning Easy: